Շուշանիկ Կուրղինյան

Ապրել եմ ուզում

Ապրել եմ ուզում, բայց ո՛չ մեղկ կյանքով,
Անհայտության մեջ, անշահ, բթամիտ,
Կամ արդ ու զարդին գերի ողջ մտքով՝
Որպես թույլ էակ, քնքուշ ու վտիտ. —
Այլ ձեզ հավասար, ձեզ պես բախտավոր
Ով դուք այր մարդիկ, ուժեղ եւ համառ,
Փորձանքի դիմաց՝ առողջ, մտավոր
Կատարելությամբ եւ մարմնով կայտառ:

Սիրել եմ ուզում՝ անկե՛ղծ, անդիմակ —
Ձեզ պես ինքնիշխան. որ երբ սիրեցի՝
Երգեմ աշխարհին իմ սիրո նվագ
Եվ սիրտս բանամ, սիրտս կանացի՝
Ամբոխի առաջ . . . նրա խիստ դատին
Արհամարհանքի դիմեմ վահանով
Եվ սո՛ւր նետերը ուղղված իմ սրտին
Փշրե՛մ, ջախջախե՛մ աննվաճ թափով:

Գործել եմ ուզում ձեզ հետ հավասար,
Որպես ամբոխի հարազատ անդամ.
Եվ անկախության իդեալի համար
Թող գիշեր ցերեկ, միշտ, ամեն անգամ
Կրեմ հալածանք, երկրե-երկիր

Թափառեմ, տոկամ . . . եւ թող տանջանքի
Բեռը ինձ ճնշե թեեւ տարագիր
Միայն՝ ձեռք բերեմ իմաստը կյանքի:

Ուտել եմ ուզում՝ հանգիստ ձեզ նման՝
Այն արդար հացից — որին ճարելու
Սուրբ աշխատանքին տվի իմ լուման.
Գոյության կռվում խոնարհ եւ հլու
Ամոթ չզգալով օրհնած վաստակից
Թող թափեմ աղի քրտինք-արտասուք
Ապրուստիս՝ բանվոր իմ ժիր ձեռքերից
Հոսե ալ արյուն, հոգնե իմ թիկունք:

Կռվել եմ ուզում, նախ՝ ձե՛զ ախոյան
Ձեր դիմաց կանգնած հի՛ն-հի՛ն վրեժով.
Որ անմտորեն, առանց գթության
Ինձ ճորտ դարձրիք սիրով եւ ուժով . . .
Ձեզ հետ իմ սեռի հաշիվը մաքրած —
Կռվել եմ ուզում եւ բիրտ կյանքի դեմ —
Ձեզ պես համարձակ, ձեր ձեռքը բռնած
Լինել-չլինելուն կանգնած դեմ առ դեմ . . .

Հունիս 9, 1907